



ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊՈԼԻՆԵՑԻԱԿԱՆ ԲԱՌԱՋԵԻԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ ՎՅՅԵՐԵՆ ԶՈՒԳԱՅԵՈՆՆԵՐԻ ՅԵՏ ՎԱՄԵՍԱՏՈՒԹՅԱՆ ՍԻՃՈՅՈՎ

Պոլինեզիական լեզուներում «բառ» հասկացության սահմանումը դեռևս կապված է որոշակի դժվարությունների հետ: Դրա պատճառները մի քանիսն են. ա) այս լեզուներում դյուրին չէ որոշել ձևույթի եւ վանկի սահմանները, բ) դժվար է տարբերակել ձևույթ—վանկ—արմատ—բառ եզրույթները, քանի որ դրանք հաճախ նույնանում են, գ) միեւնույն ձևույթը պոլինեզիական լեզուներից մեկում կարող է հանդես գալ որպես ածանց, մյուսում՝ որպես քերականական ձևույթ: Այդ պատճառով «ձևույթ», «վանկ», «արմատ», «բառ» հասկացությունները ներկայացնելիս մենք հավատարիմ կմնանք պոլինեզիագետների նախընտրած եզրաբանությանը:

Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտությունները, պոլինեզիական լեզուներ—հայերեն բառային զուգահեռները մեծավ մասամբ արտացոլում են վանկային հայերենին հատուկ լեզվական իրողությունները: Օրինակ՝ թաիթ. i-te «տեսնել» — գրբ. տես «տեսողություն» (բխեցվում է *derk- «նայել» արմատից՝ Ի-ի անկումով), ռապան. kite₂ «տեսնել, նկատել», «իմանալ» — գրբ. գէտ/գիտ- «գիտակ, գիտուն, գիտցող» (*ueid-/*uoid- «տեսնել, գիտենալ»), թաիթ. a-mu «ուտել», ռապան. amu, amuamu, hamu, hamuhamu «ուտել մնացորդները» — հայ. մնկ. ամ (անել), համ-համ (անել) «ուտել», ռապան. հա₅ «հով, սյուք» — գրբ. հով (hov) «հով, հովանի, քամի» (*pou- *p(h)u- «փչել, ուռչել»-ից), ռապան. հօ₁ «խփել, մտրակել» — գրբ. հար (har) «զարնել, խփել» (*per- «խփել, զարկել»-ից), ռապան. haga₂ «լսել», «համաձայնել» — գրբ. յագ- «գոչուն», որից՝ յագչումն (*au- *aued- «խոսել»-ից), ռապան. hana «տաքություն, ջերմություն», «զգալ տաքություն» — գրբ. հուն «կրակ», «արմատ հնոց բառի» (*pun- արմատից, որ *pur-> հուր բառի տարբերակն է), ռապան. кері «փորել, քանդել, պոկել» — գրբ. քեր «քերած կամ գրած բան» (*sqer-, *qer- «կտրել, ճեղքել»),

ռապան. tekateka (teka-teka) «պտտվել» — գրք. թեք «ծուռ», որից՝ թեքել, թեք-թեքել «շատ տեղերից կամ շատ անգամ թեքել, ծռել» (*tek-՝ «հյուսել», *tek'-p) եւ այլն: Ուստի պոլինեզիական բառաձեւի քննությունը նպատակահարմար է սկսել ձեւույթի եւ վանկի մասին որոշակի ծանոթություն ունենալուց հետո:

Բոլոր պոլինեզիական լեզուների համար ընդհանուր են ձեւույթների CVCV, VCV, CVV, CV, VV տեսակները: Կառուցվածքի եւ վանկերի քանակից կախված՝ թափթերենում տարբերակվում է արմատական ձեւույթի երեք տեսակ¹. միավանկ՝ CV, երկվանկ՝ V+V, V+CV, CV+V, CV+CV, եւ եռավանկ՝ V+CV+CV, V+CV+V, CV+V+CV, CV+CV+CV արմատական ձեւույթներ: Ռապանուերենում տարբերակված է ձեւույթի հետեւյալ վեց տեսակը. V, VV, CV, CVV, VCV, CVCV²: Վերջինս (CVCV) ռապանուերենի ձեւույթի վերին սահմանն է, առավել հաճախադեպ են CV, CVV, VCV տիպի ձեւույթները³: Ռապանուերենի ձեւույթում որոշակի բաղաձայնների առկայության դեպքում բացառվում են ձայնավորների հետեւյալ զուգադրումները. a—e, i—e, e—i, o—u, u—o, i—u, o—e, ինչպես նաեւ հետեւյալ հնչութագույգերը. g—k, p—m, n—t, v—p, v—m եւ, հետեւաբար, gVkV, kVgV, pVmV, mVpV, vVpV եւ pVvV ձեւույթները:

Պոլինեզիական լեզուներում աղբյատիկ հնչութային համակարգին (12—17 հնչյուն) զուգահեռ գործում են նաեւ վանկի կառուցվածքի տարածեությունը խիստ սահմանափակող միտումներ: Պոլինեզիական լեզուները, այդ թվում նաեւ ռապանուերենը, հայերենի պես, չեն հանդուրժում բաղաձայնների կուտակումներ⁴: Այս լեզուներում միակ հնարավոր կառուցվածքները V, VV, CV, CVV տիպի վանկերն են: Փակ վանկերը խիստ հազվադեպ են նույնիսկ արտապոլինեզիական լեզուներում⁵, որտեղ դրանք գործնականում հնարավոր են⁶:

¹ Տե՛ս В. АРАКИН, Таитянский язык, Москва, 1981, էջ 22:

² Տե՛ս И. ФЁДОРОВА, Мифы и легенды острова Пасхи, Ленинград, 1988, էջ 84:

³ Տե՛ս И. ФЁДОРОВА, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 39—81:

⁴ Տե՛ս S. ENGLERT, La tierra de Hotu Matua, Padre les Casas (Chile), 1948, էջ 328:

⁵ Պոլինեզիական լեզուների ընդհանուր թվաքանակը 30 էր (այժմ հաշվվում է 40), որոնց համարյա կեսը խոսվում է Պոլինեզիայից դուրս: Այսպես կոչված «պոլինեզիական եռանկյունու» ներսում խոսում են 16 լեզվով: Պոլինեզիական լեզուներին մոտիկ այլ լեզուներ տարածված են Մեկանեզիայի տարբեր մասերում. պոլինեզիական եռանկյունուց դուրս գտնվող եւ իրար հետ անմիջական կապ չունեցող 19 կղզու բնակիչներ խոսում են պոլինեզիական 14—15 լեզվով, որոնք կոչվում են արտաքին պոլինեզիական կամ արտապոլինեզիական:

⁶ Տե՛ս В. КРУПА, Полинезийские языки, Москва, 1975, էջ 30:

Ռապանուերենի վանկը պարունակում է մեկ կարճ կամ երկար ձայնավոր, որին կարող է նախորդել բաղաձայն՝ (C)V(:): Ինչպես հայերենում, ռապանուերենում եւս գոյություն չունեն երկու (եւ ավելի) բաղաձայններով սկսվող արմատներ. «Հայերենում երկու բաղաձայնով վանկ չի սկսվում. կրակ, նրագ, դմակ, բնակվել, վրա եւ այս կարգի բոլոր բառերի առաջնավանկը վերջնաբաց վանկ է կը, նը, դը, բը, վը ձևերով»⁷: Ռապանուերենում բաղաձայնային կուտակումները բացառված են ոչ միայն բառասկզբում, այլեւ բառամիջում, փակ վանկերը՝ եւս: Հայերենում նույնպես ոչ միայն բառասկզբում եւ բառամիջում երկու բաղաձայնով վանկ չի սկսվում, այլեւ սակավաթիվ են բառավերջում երկու բաղաձայնով վանկերը:

Թաիթերենում հաջողվել է տարբերակել վանկերի հետեւյալ տեսակները.

V — [u-ʔoo] «գլուխ», [e-tu-e] «բարձունք»,

VV — [ʔoi-re] «քաղաք», [pa-pa-i] «գրել»,

CV — [ʔa-re] «տուն, հյուղ», [a-na-pa-pe] «գետ»:

Այս վանկերը բառի մեջ կարող են լինել թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում: Թաիթերենում բացառված է բաղաձայնի դիրքը վանկի եւ բառի վերջում, այնինչ ցանկացած ձայնավոր կարող է հայտնվել վանկի թե՛ սկզբում, թե՛ վերջում: Բոլոր բաղաձայնները կարող են հանդես գալ թե՛ վանկի, թե՛ բառի սկզբում⁸:

Հավայերենում առկա է ընդամենը երկու տեսակի վանկ՝ CV եւ CVV: Վերջիններս պարունակում են ei, eu, oi, ou, ai, ae, au, ao երկհնչյուններ⁹: Հավայերենի բոլոր վանկերը բաց են, վանկի սկզբում բացառված է բաղաձայնների կուտակումը¹⁰:

Ռապանուերենում (Ջատկի կղզու բնիկների լեզուն), ինչպես բոլոր պոլինեզիական լեզուներում, բոլոր վանկերը բաց են. փակ վանկի գոյությունն այս լեզուներում, որտեղ բացառվում են բաղաձայնների կուտակումները, պարզապես անհնար է անգամ փոխառություններում: Այդ է պատճառը, որ փոխառությունները պոլինեզիական լեզուներում հա-

⁷ Գ. ԶԱՀՈՐԿՅԱՆ, Է. ԱՂԱՅԱՆ, Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Վ. ՔՈՍՅԱՆ, Հայոց լեզու, I մաս, Ա. պրակ, Երևան, 1980, էջ 114:

⁸ ՏՆՍ В. АРАКИН, Таитянский язык, Москва, 1981, էջ 16:

⁹ ՏՆՍ M. PUKUL, S. H. ELBERT, Hawaiian-English Dictionary, Honolulu, 1957, էջ XXIX:

¹⁰ ՏՆՍ В. КРУПА, Гавайские языки, Москва, 1979, էջ 18:

ճախ դառնում են անճանաչելի, ինչպես, օրինակ, անգլ. pilot — թաիթ. pairati, անգլ. president — թաիթ. peretiteni, անգլ. rise — թաիթ. raiti, անգլ. petticoat — թաիթ. piritoti, անգլ. paradise — թաիթ. paradaiso «դրախտ», անգլ. September — թաիթ. Setepa «սեպտեմբեր», անգլ. touel — թաիթ. tauera «սրբիչ», անգլ. pencil — թաիթ. penitara «մատիտ», անգլ. market — թաիթ. makete «շուկա», անգլ. presbyter — թաիթ. perepitero «վանական»¹¹, ֆրանս. franc — թաիթ. farane, ֆրանս. centime — թաիթ. tenetima, ֆրանս. grammaire — թաիթ. arame եւ այլն:

Ռապանուերենում հաշվված է 49 վանկ: Պոլինեզիական լեզուներին բնորոշ չէ va վանկը, որը բացակայում է նաեւ ռապանուերենում, ինչպես նաեւ՝ vu վանկը եւ ձեւույթը¹²: Հայերենում բառասկզբում չեն հանդիպում we, wo վանկերը: Գ. Զահուկյանը գտնում էր, որ «բուն հինհայկական կազմություններում վանկը չի կարող սկսվել ea-ով, we-ով եւ wo-ով. այս դեպքում ea-ին եւ we-ին փոխարինում են ya-ն եւ ve-ն (yawray «խորթ հայր», vegg «վեց» եւ այլն), իսկ wo-ն ընդհանրապես չի հանդիպում»¹³: Ռապանուերենում հազվագեպ են նաեւ ge, gi, go, gu, me, mi, vo վանկերը, ինչն ուսումնասիրողները բացատրում են այդ վանկերի մեջ մտնող բաղաձայնների ոչ մեծ հաճախականությամբ¹⁴:

Հր. Աճառյանը ժամանակին տվել էր դասական գրաբարի չորս կարգի վանկերի (a, ba, bab, abr) վիճակագրական հարաբերությունն այլ լեզուների համեմատությամբ¹⁵: Հետագայում էդ. Աղայանը դասական գրաբարում տարբերակեց վեց տեսակի վանկ: Դրանք են՝ երկբաց կամ մենահնչույթ (a), նախափակ երկհնչույթ (ba), վերջափակ երկհնչույթ (ab), վերջափակ եռահնչույթ (arb, asb), երկփակ եռահնչույթ (bab), երկփակ քառահնչույթ վանկեր (barb, basb, barl)¹⁶: Վանկի հնչունների քանակով հայերենն աշխար-

¹¹ Տէս В. Аракин, Таитянский язык, Москва, 1981, էջ 19–22:

¹² Տէս И. Фёдорова, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 43:

¹³ Տէս Г. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, Е., 1967, էջ 24:

¹⁴ Տէս И. Фёдорова, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 42:

¹⁵ Տէս Հր. ԱճԱՌՅԱՆ, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1953, էջ 256–257:

¹⁶ Տէս է. ԱՂԱՅԱՆ, Գրաբարի քերականություն, հտ. 1, Սինխրոնիա, գիրք Ա., Հնչունաբանություն, Երևան, 1964, էջ 261–262:

հի լեզուների համակարգում միջին դիրք է գրավում¹⁷: Արեւմտահայերենում բաց վանկատիպերը կազմում են ընդհանուր վանկատիպերի 1/3-ը, բայց խոսքաշարում դրանք թվային գերակշռություն ունեն: Գրական արեւմտահայերենում ամենահաճախագեպ վանկատիպը ԲՁ-ն¹⁸ (CV) է, որն ունի շուրջ 49% հաճախականություն: Ըստ նվազող հաճախականության՝ հաջորդ վանկատիպը եռահնչույթ ԲՁԲ (CVC) տիպն է (34%): Արեւմտահայերենի հնչաբառը կարելի է ներկայացնել երկհնչույթ ԲՁ (CV) (բաց) եւ եռահնչույթ՝ ԲՁԲ (CVC) (երկփակ) վանկատիպերի կապակցության պատկերով¹⁹: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզուներում ամենադյուրին արտասանվողը ԲՁ (CV) եւ ԲՁԲ (CVC) կառուցվածքի վանկերն են: Հայերենի կարեւոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այս տիպի վանկերը միասին կազմում են հայերենի բոլոր վանկերի 80%-ը: Իսկ վերջիններիս մեջ՝ «...արդի հայերենում ամենահաճախականը երեք հնչյունից կազմված եւ մեկ բաղաձայնով վերջացող վանկն է (քար, սար, մատ, տուն եւ այլն)»²⁰:

Ինչպես տեսանք, վանկի նման՝ երկփակ եռահնչույթ կառուցվածքը (CVC) խորթ է պոլինեզիական լեզուներին, այդ թվում եւ ռապանուերենին, այն հասկանալի պատճառով, որ այստեղ բացառված են փակ վանկերը: Հետաքրքիր է սակայն, որ արդի հայերենի նման վանկատեսակին պատկանող բառերի մի ստվար մասը ռապանուերենի տարատեսակ ձեւերի օրինաչափ զարգացումների տառացի արդյունք է:

Դիտարկենք մի քանի օրինակ. արդի հայերենի երկփակ եռահնչույթ կառուցվածք ունեցող (CVC) վանկն ստացվում է՝

ա) ռապանուերենի նախափակ երկհնչույթ (CV) ձեւերից՝ բաղաձայն տարրերի օրինաչափ հավելման շնորհիվ.

ռապան. ka₃ «արեւածագ», ka₅ «վառել, բորբոքել» — գրբ. կառ «վառում, վառելը» (*ker- «այրվել, վառ(վ)ել, տաքացնել» արմատից (°)²¹,

ռապան. ha «չորս» — գրբ. քառ «չորս» (*ketvores- արմատից)²²,

¹⁷ Տե՛ս http://ysu.am/files/05L_Ezekyan.pdf և. ԵՁԵԿՅԱՆ, Հնչյունն (հնչույթ) իբրեւ ոճույթ. հնչյունների ոճական արժեքը, էջ 38:

¹⁸ Բ-բաղաձայն, Զ-ձայնավոր:

¹⁹ Տե՛ս http://language.sci.am/sites/default/files/book/girk_b.pdf Ա. ՍԱՐԳՍԵԱՆ, Ընդհանուր եւ հայ լեզվաբանություն, հատոր Բ., Պարմա-Պրինտ, Երեւան — Լոս Անջելես — 2019, էջ 201—202:

²⁰ Տե՛ս http://ysu.am/files/05L_Ezekyan.pdf և. Եզեկյան, Հնչյունն (հնչույթ) իբրեւ ոճույթ. հնչյունների ոճական արժեքը, էջ 38—39:

²¹ Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 385:

²² Անդ, էջ 777:

ռապան. pō «մթուխյուն, գիշեր, օր» — գրբ. բալ «մէգ, մթին, մռայլն, մթագոյն», «մառախուղ, աղոտ, ամպ, գիշեր» (*bhel- «փայլուն, սպիտակ»-ից),

ռապան. tu «խփել, ծեծել» — գրբ. թուխ «խփում, խփելը. թխում, թխելը» (հ.-ե. *tukh-`*(s)teuk- «հրել, խփել»),

ռապան. pu₁ «փոս», «անցք», «ջրհոր» — հայ. բրբ. (ՆԲ (Գնձ.) Հվր. Կր. (Շիր.) Մշ. (Բղշ.) Վն.) պուռ «փոս, փոսիկ», բրբ. (Ղրբ. Պլ. Սբ. Խրբ. Արբ. Դրս. (Քղի) Ակն. Քսբ. Մկս.) պուկ/պոկ «բուկ», անհայտ ծագման համարվող գրբ. փոռ «անցք, խոռոչ, դատարկ տեղ, արգանդ», նաեւ հունա-կան փոխառություն համարվող փոս «փոս»²³,

ռապան. pu₃ «փող», pu hura «սրինգ, շվի» — գրբ. փուբ «փուբս, շունչ» (*phu- «փչել»-), անհայտ ծագման համարվող փող «խողովակ, շեփոր»²⁴,

ռապան. hi₂ «գլխացավ» — գրբ. խիթ «ցավ, հիվանդություն, վերք» (բխեցվում է *(s)k(h)ai-t- «խփել, հրել» արմատից),

ռապան. hu₃ «բոց», «վառվել, վառել» — գրբ. հուր «կրակ, բոց» (*pur, peuōr-, *pun- «կրակ» արմատից),

ռապան. ta «խփել» — հայ. բրբ. (Ար. Ղրբ. Հմշ. Արբ. (Տրն.)) տալ «ծեծել», «զարկել», (Ար.) «սպանել», (Ղրբ.) «սաստիկ ծեծել»²⁵,

ռապան. ki «խոսել, ասել», «խոսք, բառ» — բրբ. (Գոր. Հմշ. Ղրբ. Մկ. Շմ. Մրդ. Սլմ. Վն.) կիր/կիր (կր-, կռ-), նաեւ (Ար. Թբ. Ղրբ. Ագլ. Մլթ. Խտշ. Կր. Խրբ. Արդ.) գիր (գր-, գռ-) «գիր» (*uēro- *uer- «պատռել, քերել, ճղել»),

ռապան. ge «հնչել, զնգալ» — հայ. ձայն, բրբ. ձեն/ծէն «ձայն» (*g'hunii-`g'huen- «հնչել» արմատից) եւ այլն,

բ) ռապանությունի նախափակ եռահնչույթ (CVV) ձևերից՝ վերջ-նահնչունի անկման եւ բաղաձայն տարրերի օրինաչափ հավելման արդյունքում.

²³ Անդ, էջ 767:

²⁴ Ռապանությունի պու արմատով կազմված pu hura «սրինգ, դուդուկ, զուռնա» բառակապակցությունը բառացիորեն նույնական է գրաբարյան փող հարել «փող փչել»-ին:

²⁵ Նկատենք, որ արդի համեմատաբանության մի շարք հիմնարար տեսական դրույթներում այսօր ոչ միայն կարեւորվում, այլեւ առաջնային նշանակություն է տրվում հայերենի բարբառների փաստերին: Այլեւս պարզ է, որ հայերենի բարբառների (մանավանդ հնատիպ բարբառների) տվյալները, որպես հայերենի զարգացման վաղնջագույն շրջանի լեզվավիճակն արտացոլող իրողություններ, պետք է անպայմանորեն ներառվեն համեմատական վերլուծությունների մանավանդ տարածամանակյա ուսումնասիրությունների մեջ:

ռապան. *kai₅* «լինել կարմիր (արեւի մասին՝ խավարման ժամանակ)» — գրբ. կառ «վառում, վառելը» (**ker-* «այրել, վառ(վ)ել, տաքացնել» (°)),

ռապան. *kai₄* «ուտել» — գրբ. կեր/կուր «ուտելիք, կերակուր» (**guer-* «կլանել, ուտել»),

ռապան. *kau₁* «գնալ» — գրբ. գա- (բրբ. գո-) «գալ», որից՝ գալ (**uadh-* «քայլել, գնալ» արմատից, **uadh-mi* «գամ») ²⁶,

ռապան. *tao* «ամուսնու քույրը» — գրբ. տալ «ամուսնու քույրը» (**gəḷōu-*),

ռապան. *tai* «ծով, օվկիանոս» — գրբ. թաւ «ապուր», որից թանալ «թրջել» (բխեցվում է **tā-ni-* **tā-* «հալել, հոսել»-ից), որից՝ թանալ «թրջել»,

ռապան. *pae₂* «սկսել ծեծկռտուք» — գրբ. բախ «արմատ բախելույ, բախումն», «ընդհարում, հարված», բնաձայնանկարագրական արմատ (**bhu(m)bh-*),

ռապան. *vai* «շուր, հեղուկ», «խմիչք, բույսերի հյութը» — գրբ. վէտ «ալիքների ծովիք», վէժ «դուրս թափիլ, դուրս հոսիլ», որից վիժակ «հոսանք, ջրվէժ», գեա «գետ» (**uedo-* **au(e)-*, -ed-, -er- «խոնավացնել, հոսել»-ից),

ռապան. *hau₅* «հով, սյուք» — գրբ. հով «հով, հովանի, քամի, զով» (**pou-* **p(h)u-* «փչել, ուռչել»), բրբ. հովա, հովան, նաեւ հավ (ղրբ.) «հով, զով», «գով»,

ռապան. *naa* «թաքցնել, ծածկել», «գաղտնի» — գրբ. նար-, ներ-ք-ին «գաղտնի», ներ «մեջ, ներսը» (**(e)nero-* «ներքին» կամ **ner-* «տակ» արմատից),

ռապան. *pae₆* «անմշակ քարեր» — գրբ. պալ «քարաժայռ, քար», «տեղից չշարժուող խոշոր ապառաժ քար», բրբ. պալ «լայն եւ դուրս ցցված» ²⁷,

ռապան. *paa₂* «շրջապատել» — գրբ. պար «շուրջ, շրջան, պար» (հ.ե. **pero-*), նաեւ պաա «շրջան, պտույտ, բոլորտիք, չորս կողմը» (**pet-* «տարածել, հատկապես թեւերը»),

ռապան. *gei* «հիմար» — գրբ. գար «ցաւ կամ հիւանդութիւն», (համարվում է փոխառութիւն իրանական աղբյուրից),

²⁶ Աճառյանը բերում է խեթ. *wai* «գալ» գուգահեռ: Տե՛ս Հ. Բ. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, այսու՝ ՀԱՅ, Երեւան, էջ 143:

²⁷ Հ. Բ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱՅ, հտ. 4, էջ 4:

ռապան. pa_{e}_7 «ավարտել, վերջացնել» — գրբ. բառ «ծայր, վերջ, սահման» (համարվում է փոխառություն պրակ. bav-ից),

ռապան. pa_{e}_3 ա) «մաս, բաժին» — գրբ. բաժ «մաս, բաժին» (համարվում է փոխառություն իրանական baz-ից), (տես նաև հայ. բրբ. (Ար. Խրբ. (Բլ.) Դրբ. Հվր. (Քնդ.)) փայ «բաժին, մաս» տառացի զուգահեռը) եւ այլն,

գ) ռապանություններն լեզվի նախափակ քառահնչույթ (CVCV) ձեւույթից, որը ռապանությունների ձեւույթի վերին սահմանն է՝ բառավերջի շեշտագույն ձայնավորի օրինաչափ հնչահապավման շնորհիվ.

ռապան. tara_1 «բուն (ծառի), փուշ», tari_4 «ծովային ջրիմուռի անվանում» — գրբ. տառ «մնջեղ ծառի սերմը կամ հունտը», նաև ծառ «ծառ» (* g'ers- «ոլորել, ծռել, ճյուղերից, թփերից հյուսել», ծառ <g'rs-)²⁸,

ռապան. taki_3 «պահել, պահպանել», taki_4 «հետապնդել» — գրբ. թաք «ծածկուիլ, պահուիլ», որից ունենք նույնանշանակ թաքչիլ/թագչիլ, թաքնի «ծածուկ» եւ այլն (բխեցվում է հնիս. * takē- ից),

ռապան. teka «պտտվել (շրջադարձի մասին)» — գրբ. թեք, որից՝ թեքել «ծռել, դարձնել» (* tek- «հյուսել» արմատից),

ռապան. turuturu (turu-turu) «կաթ-կաթ թափել (ջուրը, հեղուկը)» — գրբ. թոր «հոսում, հոսք, հոսանք, կաթում», որից թորել/թուրել, թորթորել (բխեցվում է (* (s)ter- «անմաքուր հեղուկ» արմատից),

ռապան. tupu_2 «ծառ», «ընձյուղ» — գրբ. թուփ «կարճ՝ ցած ծառ», «թաւ ոստ, տերեւալից ճիւղ» (հնիս. tupho- ձեւից)²⁹,

ռապան. hana «տաքություն, ջերմություն», «զգալ տաքություն» — գրբ. հուն «կրակ», «արմատ հնոց բառի» (* pun- արմատից, որ * pur- > հուր բառի տարբերակն է),

ռապան. kino «վատ, չար» — գրբ. քէն «ոխ, վրեժ, նախանձ, ոխակալուիլ» (բխեցվում է kuoinā- «վրեժ, պատիժ, հանցանքի քավություն համար նշանակված գին» արմատից),

ռապան. keri «փորել, քանդել, պոկել» — գրբ. քեր «քերած կամ գրած բան» (բխեցվում է * sqer- , * qer- «կտրել, ճեղքել» արմատից), որից՝ քերթ/քէրդ/քերբ/քերփ/ «քերթում, քերթելը»,

²⁸ Ք. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 360:

²⁹ Հր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 2, էջ 211:

ռապան. kite₂ «տեսնել, նկատել», «իմանալ» — գրբ. գէտ/գիտ- «գիտակ, գիտուն, գիտցող», «գիտենալ, իմանալ» (*ueid-/uoid- «տեսնել, գիտենալ»-ից),

ռապան. hinihin₂ (hini-hini) «հնազույն, հնամենի» — գրբ. հին «հին» (բխեցվում է *seno- «հին» արմատից),

ռապան. hati «կոտրել», hakahata (haka-hata)³⁰ «անդամահատել» — գրբ. հատ (ատ) «կտրելը, հատուած, կտոր», ըստ Գ. Զահուկյանի՝ թերեւս փոխառութիւն իսթերեն hattai «հատել, ծակել, պատռել»-ից³¹,

ռապան. here₁ «խփել, մտրակել» — գրբ. հար «զարնել, խփել» (*per- «խփել, զարկել» արմատից)³²,

ռապան. higā «թշվառ, ողորմելի» — գրբ. հէգ «հեգ, խեղճ» (թերեւս *peiu-՝ *pe(i)- «ցավացնել, վնասել, նախատել» արմատից)³³,

ռապան. hiro₁ «ոլորել, պտտել» — գրբ. հիռ «պտոյտ, շրջան, գալար» (*per-s-՝ *sper- «պտտել, շրջել»),

ռապան. paka₁ «չոր, չոր տեղ», «չորանալ», paka₃ «ներծծել», pakapaka (paka-paka) «շատ չոր, անապատ, չորանալ, տապակվել» — գրբ. պակ «անծանօթ պարզական արմատ», որից՝ պապակ «սաստիկ ծարավ, պասուք», պապակիլ «ծարավից այրիլ»,

ռապան. potu «դանակի սուր ծայրը» — գրբ. բութ «բութ, գուլ» (բխեցվում է *bhu-t-՝ *bhau-, bhu- «խփել, հրել» արմատից),

ռապան. puta₂ «յուղոտ», «չաղ», puku, puhı «ազահաբար ուտել, ճարպակալած» — գրբ. բուտ/բութ «ուտելիք, կերակուր» (*bhug- «վայելել»-ից),

ռապան. matu «պատրաստ լինել գնալու ինչ-որ տեղ», «գնանք» — գրբ. մատ «մօտ կամ առաջ երթալ, տանիլ», «մոտ, մոտեցում, մերձեցում» (*mād- արմատից: Աճառյանը տալիս է *mād- նախաձեւ)³⁴, նաեւ մատ (մօտ) «մոտ, մոտիկ»,

ռապան. mutu «լուսնային ամսվա 30-րդ օրանունը» — մութ/մութ(ն) «մութ» (հմմտ. հայոց 30-րդ՝ անլուսին՝ իմա՝ մութ գիշերվա անվանումը՝ գիշերավար), (*meut-՝ *meü- «խոնավ, կեղտոտ, կեղտոտել» արմատից. հ. իռլ. mothar «մութ»),

³⁰ haka-ն բաղադրու է «անել, կատարել» իմաստով:

³¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 314:

³² Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 450:

³³ Անդ, էջ 459:

³⁴ Անդ, էջ 512:

նապան, huri₂ «ձագարափոս» — գրբ. հոր «չրհոր, խոր փոս» (*poro-³⁵ *por- «անցկացնել, անցնել» արմատից),

նապան, tova «ծով» — գրբ. ծով «ծով» (*gob- «ծով» (')),

նապան, tari₂ «տանել» — գրբ. տանիլ «կրել, փոխադրել» արմատի երկրորդ ձևը՝ «տար», որից կազմվում են «տանիլ» բայի կատարյալը, ապառնին, հրամայականն ու անցյալ դերբայը,

նապան, kori₂ «չունենալ», «չլինել», «պակասել», «բացակայել», «չհերիքել» — գրբ. կոր «կորչիլ, անհետանալ», (Գ. Զահուկյանը կապում է հ.ե. *guer- «կլանել, կոկորդ, անդունդ» արմատի հետ՝ կասկածանքով),

նապան, kiki₁ «խոսել», «ասել» — գրբ. գո'գ «ասել, գոչել» (*oguh-³⁶ *ueguh- «հանդիսավոր կերպով խոսել»),

նապան, viri₂ «ընկնել բարձրությունից, գլորվել ներքեւ» — գրբ. վեր «վեր», բաղադրություն՝ վերուստ, բաղադրություն՝ վերուստ (*upper- «վեր, վրա»-ից)³⁶,

նապան, vaha ախ. «առաջ, առաջներում, առաջուց», «վաղ, կանուխ», «նախ, սկզբից», «առաջ, նախքան» — գրբ. վահ «հին», համարվում է սխալագրություն³⁷,

նապան, vera «տաք, կրակ, բոց, տաքություն» — գրբ. վառ «վառ, վառվող, փայլուն» (համարվում է փոխադրություն *uer- «վառել» արմատի ածանցյալներից որեւէ մեկից, թերեւս հատկապես խեթերենից)³⁸,

նապան, toke₃, toke rau «տարվա եղանակ» — գրբ. տոկ «տոկալ տեւելը», «երկար տեւողութեամբ, շատ» (հնխ. *dowə- արմատից, որի *dowə ձևից ունենք տեւել),

նապան, toke₃, toke rau te papakina «հյուսիսային քամու անվանում», toke rau puhı a Orogo «հարավային քամու անվանում» — գրբ. տոկ 2. «յաջողակ, ուժեղ, լաւ փշող (քամի)» (հնխ. *dowə-ից),

նապան, paka₁ «չոր, չոր տեղ, չորանալ», paka₃ «ներծծել» — հայերեն անհայտ ծագման համարվող պակ- արմատ, որից՝ պապակ «խիստ ծարավ»,

³⁵ Անդ, էջ 466:

³⁶ Հ. Ա. ձԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 4, էջ 329–331, Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 709:

³⁷ Հ. Ա. ձԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 4, էջ 296, Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 702:

³⁸ Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 704:

ռապան, noma «հյուլթալի» — գրբ. նամ «գէշ, խոնաւ, թաց», առանձին անգործած. արմատ, հայ. բրբ. (Ար. Թբ. Ղրբ. Մղր. Ուրմ. Կր. Խտջ. Սս. Վն. Մկս. Պլ.) նամ/նեմ «թացություն, խոնավություն», համարվում է փոխառություն իրանական լեզուներից՝ մ. պ. nam, namb, պ. nam,³⁹

ռապան, hana «տաքություն, ջերմություն» — գրբ. հուն (hun) «կրակ», «արմատ հնոց բառի» (*pun- արմատից) եւ այլն, եւ այլն:

Բերված օրինակներից բխում են հետեւյալ կարեւոր եզրահանգումները.

Ա) Ռապանուերենի փաստերը հայերենի համար ունեն ուղղակի սկզբնաղբյուրի արժեք, քանի որ դրանք հարազատորեն են արտացոլում վաղնջագույն՝ մասնավորապես վանկային հայերենի լեզվական իրողությունները:

Բ) Ժամանակակից հայերենի ամենահաճախական՝ երեք հնչյունից կազմված եւ մեկ բաղաձայնով վերջացող վանկի նախաձեւը պոլինեզիական լեզուներում, ի մասնավորի՝ ռապանուերենում անխաթար պահպանված հնագույն ձեւույթներն են: Այն ստացվում է մասնավորապես ռապանուերենի նախափակ երկհնչույթ (CV) եւ նախափակ եռահնչույթ (CVV) ձեւույթներին բաղաձայն տարրերի հավելման, ինչպես նաեւ ռապանուերենի լիակաղապար (CVCV) ձեւույթի օրինաչափ հնչահապավման շնորհիվ: Հիշեցնենք, որ ռապանուերենում CV եւ CVV տիպի ձեւույթները նույնպես առավել հաճախադեպ ձեւույթներն են⁴⁰:

Գ) Արդի հայերենի ամենահաճախական վանկը հայերենի ծագման եւ զարգացման հնագույն փուլերում եղել է նախափակ երկհնչույթ (CV), նախափակ եռահնչույթ (CVV) եւ նախափակ քառահնչույթ (CVCV), կամ, այլ կերպ ասած, բոլոր դեպքերում՝ բաց վանկ:

Այսպիսի եզրահանգումն անհավանական չէ, եթե նկատի ունենանք՝ ա) նման զուգահեռների մեծ թվաքանակը,

բ) դրանց ընդգրկման ոլորտը՝ հիմնական բառապաշարի միջուկը կազմող բառեր, որոնք գտնում ենք բոլոր իմաստային խմբերում,

գ) Ա. Մեյերի՝ հին հայերենի վանկի բնույթի մասին հայտնած կարծիքը:

³⁹ Տե՛ս Հ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 3, էջ 425, Գ. ԶԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 561:

⁴⁰ Տե՛ս Ի. ՖԵԴՈՐՈՎԱ, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 39—81:

«Անտուան Մեյեն, պատմա-համեմատական մեթոդով ուսումնասիրելով վանկի կազմությունը հին հայերենում⁴¹, ժամանակին այն եզրակացության է հանգել, որ «...հայերենը, ի եւ ու ձայնավորների անկումից առաջ, ուներ, ինչպես եւ հին սլավոներենը, միայն բաց վանկեր»: Այս վիճակը, ինչպես ինքն էլ ցույց է տալիս, դասական գրաբարում խախտված էր արդեն»⁴²: «...դասական գրաբարի համար սովորական են եւ բաց, եւ փակ վանկերը, բայց եւ այնպես մեկ վանկում քիչ դեպքերում են իրար հետ լինում (վանկի վերջում) երկու բաղաձայն, այն էլ այնպիսիները, որոնց կապակցությամբ կարող են հանգել բառերը»⁴³:

Ակնհայտ է, որ ժամանակին Ա. Մեյեն, հին հայերեն ասելով, նկատի ուներ հայերենի նախագրաբարյան կամ նախամաշտոցյան շրջանն ընդհանրապես, որի մեջ, արդի ձեւակերպումներով, մտնում են հետագայում Գ. Զահուկյանի կողմից տարբերակված հինհայերենյան շրջանը, վաղնջահայերենը եւ ժամանակագրորեն պոլինեզիական լեզուներին հասակակից (40 000—50 000 տարի եւ ավելի), մեր կողմից վաղնջագույն հայերեն անվանված փուլը: Ուստի կարելի է արձանագրել, որ հնագույն պոլինեզիական լեզուներում արտացոլված ենք տեսնում հայերենի զարգացման առնվազն երկու հնագույն շրջանների՝ վաղնջագույն հայերենի եւ վաղնջահայերենի լեզվական իրողությունները:

Պոլինեզիական լեզուների բառի կառուցվածքը նույնպես բավականին պարզ է, իսկ հավայերեն լեզվում նույնիսկ կարելի է ասել՝ աղքատիկ է: Այստեղ ամենատարածված կառուցվածքը մենարմատ բառերն են. hale «խրճիթ», ke’o «սպիտակ», noho «ատամ», kupu «աճել», «ընձյուղ», i’a «ձուկ»⁴⁴: Նույնը կարելի է ասել նաեւ ռապանուերենի եւ պոլինեզիական մյուս լեզուների մասին: Համեմատենք, օրինակ, հավայ. hale/ռապան. hare/տոնգա, սամոա fare — «խրճիթ, տուն», հավայ. noho/ռապան. noho «նստել», «բնակվել», հավայ. kupu/ռապան. tupu «աճել», «ընձյուղ», հավայ. kupu/ռապան. tapu «արգելք», հավայ. laa/ռապան. raa «օր», «արեւ», հավայ. ke’o/ռապան. tea «սպիտակ», հավայ. i’a/ռապան. ika «ձուկ», հավայ. lano/ռապան. rano «լեռ» եւ այլն:

⁴¹ Տե՛ս A. MEILLET, Esquisse d’une grammaire comparée de l’arménien Classique, Vienne, 1903, II հրատ. 1936, էջ 52—56:

⁴² Տե՛ս է. ԱՂԱՅԱՆ, Գրաբարի քերականություն, հտ. 1, Սինխրոնիա, գիրք Ա., Հնչյունաբանություն, Երեւան, 1964, էջ 251:

⁴³ Տե՛ս անդ, էջ 256:

⁴⁴ Տե՛ս В. КРУПА, Гавайские языки, Москва, 1979, էջ 24:

Այս ամենով հանդերձ՝ բառի ոչ միայն ստուգաբանությունը, այլև նույնիսկ «բառ» հասկացության ձևակերպումը պոլինեզիական լեզուներում կապված է որոշակի դժվարությունների հետ եւ տարակարծությունների տեղիք է տալիս: Լեզվաբանները միակարծիք չեն անգամ այն հարցում, թե նպատակահարմար է արդյոք պոլինեզիական լեզուների համար կիրառել «բառ» եզրը: Այդ իսկ պատճառով տարբեր մասնագետների աշխատություններում տարբեր եզրերի կարելի է հանդիպել⁴⁵:

Վ. Կրուպան գտնում է, որ պոլինեզիական լեզուների, մասնավորապես՝ հավայերենի նկարագրության ժամանակ առավել նպատակահարմար է բառ եւ ձևույթ հասկացությունները դիտարկել միասին, քանի որ «այն քերականական իմաստները, որոնք սովորաբար վերաբերում են ձևաբանության ոլորտին, հավայերենում եւ պոլինեզիական մյուս լեզուներում կարող են արտահայտվել ինչպես բառի, այնպես եւ դարձվածքի միջոցով (պոլինեզիական լեզուներում ընդունված է դարձվածք անվանել միջուկային բառից եւ մասնիկներից կազմված բառախումբը)»⁴⁶:

Ս. Էլբերտը հավայերենի նկարագրության ընթացքում գործածում է «բառ» եզրը՝ այն բնութագրելով որպես հնչյունների նվազագույն հաջորդականություն, որն արտասանվում է անջատ եւ օժտված է իմաստով: Մասնիկները եւս արտասանվում եւ գրվում են անջատ, սակայն զուրկ են բառիմաստից, երբ գործածվում են առանձին: Հետագայում, ճշտելով իր տեսակետը, նա հանգում է այն եզրակացության, որ հավայերենի բառերը կարելի է բաժանել հետեւյալ խմբերի՝ կարճ բառեր, թվականներ, ձայնարկություններ եւ երկար բառեր⁴⁷:

Բ. Բիզզը, խոսելով անջատական լեզուների մասին, ինչպիսիք են նաեւ պոլինեզիական լեզուները, գրում է. «Լեզվաբանական նկարագրության պայմանական բաժանումը հնչութաբանության, ձևաբանության եւ քերականության հանդիպում է հայտնի դժվարությունների, եթե նկա-

⁴⁵ SĒU G. BIGGS, The Structure of New Zealand Maaori, AL, vol. 3, 1961, pt 3, էջ 1–53. A. PAWLEY, O Scheme for Describing Samoan Grammar, “Te Reo”, vol. 4, 1951, էջ 8–43. A. PAWLEY, Samoan Phrase Structure, AL, vol. 8 (1966), №5, էջ 1–63:

⁴⁶ SĒU B. КРУПА, Гавайский язык, Москва, 1974, էջ 27, Полинезийские языки, Москва, 1975, էջ 40:

⁴⁷ SĒU S. ELBERT, Outline of Hawaiian Grammar, ըստ B. КРУПА, Полинезийские языки, Москва, 1975, էջ 41:

րագրվող լեզուն անջատական է: Անջատական լեզուներ ասելով ես նկատի ունեմ այն լեզուները, որտեղ իմաստակիր բառերը... մեծավ մասամբ միաձեւույթ են: Եւ պոլինեզիական լեզուները հենց այդպիսին են... Եւ այսպես, բառը դիտարկվում է որպես ձեւաբանական նկարագրության սահմանային միավոր: Սակայն, քանի որ պոլինեզիական լեզուներում բառը միաձեւույթ է, ապա ձեւաբանության մեջ շատ քիչ բաշխումային կանոններ կարող են տրվել»⁴⁸: Այս տեսակետից, Բիգգի կարծիքով, որպես ձեւույթների համակցման նկարագրության միավոր՝ նպատակահարմար է ընդունել ոչ թե բառը, այլ դարձվածքը: Բայց իր հետագա աշխատանքում նա, այնուամենայնիվ, գործածում է «բառ» եզրը՝ բառերը բաժանելով հիմքի (bases) եւ մասնիկի (particles)⁴⁹:

Համարյա նույն կարծիքին էր նաեւ է. Պոլին. «Միանգամայն հավանական է թվում, որ բոլոր լեզուներում հանդիպում են այնպիսի միավորներ, որոնք օժտված են բառին բնորոշ հատկանիշներով: Բայց դրանից չի հետեւում, որ միշտ օգտակար է «բառ» հասկացությունը մտցնել լեզվի կառուցվածքային նկարագրության մեջ... Սամոա, ինչպես նաեւ մաորի լեզուներում բառերը բոլորովին այլ կարգի միավորներ են, քան անգլերենի բառերը»⁵⁰:

Ջ. Միլներն արդարացված է համարում «բառ» եզրի կիրառությունը պոլինեզիական լեզուների նկարագրության ժամանակ⁵¹:

Ռապանուրենի բառաձեւը կարող է ընդգրկել առավելագույնը չորս ձեւույթ⁵²:

R⁵³ — ge «հնչել, զնգալ», aga «աշխատանք», ha «չորս», kata «ծիծաղ, ծիծաղել»,

A-R — e-rima «հինգ», ma-kona «հագեցում», ki-ruga «բարձր, բարձրանալ», ma-haro «զարմացնել», haka-hori «բացառել», haka-inu «խմել»,

R-A — noho-ga «կյանք», noma-ke «հյուսիս», nui-a «ծաղկել, բարգավաճել», take-o «ցուրտ», «սառը», «սառչել», vana-ga «ասել, պատմել», «լեզու, խոսք»,

⁴⁸ S'ku G. BIGGS, Morphology-Syntax in a Polynesian language, JPS, vol. 69, 1960, էջ 376—379:

⁴⁹ S'ku G. BIGGS, Let's Learn Maori, Wellington, 1969, էջ 18:

⁵⁰ S'ku A. PAWLEY, A Scheme for Describing Samoan Grammar, «Te Reo», vol. 4, (1951), էջ 39:

⁵¹ S'ku G. MILNER, Samoan Dictionary Preface, London, 1966, էջ XXIV—XXV:

⁵² S'ku И. ФЁДОРОВА, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 46:

⁵³ R-արմատ, A-ածանց:

R-R — koto-koto «արյունահոսություն», ega-ega «կարմիր», noku-noku «կոկորդ», paka-paka «շատ շոր, անապատ, շորանալ, տապակվել», haka-haka «պարել»,

A-R-A — haka-hoki-a «լքված», haka-hori-ga «մեղադրել, դատապարտել», ki-ruga-haga «բարձունք», ko-koti-haga «խոր վերք, կնճիռ», «առու», haka-hoki-haga «պարտականություն, պարտք», haka-maro-a «կանգնեցնել»,

A-A-R — haka-ma-ego «շոյել», haka-ma-rere «ջարդել», haka-ho-nui «գովել, գովասանք», haka-e-uru «լուծել, խառնել»,

A-R-R — haka-peka-peka «վանդակաճաղ», haka-puta-puta «ագահաբար ուտել», haka-rake-rake «շարիք պատճառել», haka-raa-raa «կարգը խախտել»,

R-R-A — nui-nui-a «աճել», moe-moe-a «երազ»,

A-A-R-R — haka-ma-kenu-kenu «շողոթորթել», haka-ki-ruga-nui «բարձրացնել», haka-ha-humu-humu «ներշնչել», haka-ma-rere-rere «փշրել, մանրացնել»,

A-R-R-A — haka-rahi-rahi-ga «խախտել կարգը», haka-mana-mana-u «հիշեցնել», haka-mana-mana-u «հիշեցնել, վերհիշել», haka-mou-mou-ga «վերջ, ավարտ»,

A-A-R-A — haka-e-uru-ga «խառնուրդ», «խառնած»⁵⁴;

Ռապանուերենին առավել բնորոշ են R-R, A-R, A-R-R, A-A-R-R, R-R-A բառաձևերը:

Ռապանուերեն—հայերեն բառային ընդհանրությունների համեմատական ստուգաբանությամբ պարզվում է, որ ռապանուերեն (եւ ոչ միայն) բառերի՝ հայերեն զուգահեռների հետ համեմատությունը կարող է նպաստել ռապանուերենի ձևույթի սահմանների որոշմանը եւ բառաձևի կառուցվածքի ճշգրտմանը:

Այսպես օրինակ՝ ռապանուերեն ՈՆՈՆ «բարակ, նիհար» բառը համարվում է մենարմատ (R) բառ: Վերջինիս գրաբարյան զուգահեռներն են. նու-րբ «բարակ, թեթել, անգայտ» (հնիւ. snōbhri՝ *snēbh արմատի միջին ձայնդարձից⁵⁵, ըստ Գ. Զահուկյանի՝ *snōbri՝ *snēbh-ri- «նուրբ, նեղ» արմատից)⁵⁶, նաեւ նե-րգել «նվազ, թուլլ, վտիտ, տկար» (բխեցվում է

⁵⁴ Բացահայտված է միայն նշված բառը (տե՛ս И. Фёдорова, Некоторые черты развития рапануйского языка (на материале фольклорных текстов), в кн. «О языках, фольклоре и литературе Океании», Москва, 1978, էջ 46):

⁵⁵ Տե՛ս ՀԱԲ, էջ 474:

⁵⁶ Տե՛ս Գ. Զ. ԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 574:

*snerkeu- (*snerk-), *sner- «պտտել, ոլորել, սեղմել, կոնծել» արմատից): Այս հայերեն զուգահեռները, որոնց մեջ տեղի է ունեցել բաղաձայն տարրերի հավելում ռապանուերեն *nu* (նու) պարզական արմատին, ցույց են տալիս, որ այն երկարմատ կրկնավոր՝ *nu-nu* կազմություն է կամ, որ նույնն է՝ (R-R) բառաձև:

Նույնպիսի մենարմատ (R) բառ է համարվում նաեւ ռապանուերեն *mu* «լռակյաց», «համր» բառը: Վերջինիս հայերեն զուգահեռներն են. գրբ. մու-նջ «համր, լուռ, անխօս» (բխեցվում է հնխ. *mundyo-* ձևից)⁵⁷, գրբ. մու-ռ «լուռ ու մունջ լսող» (**mu-s-ro*՝ **mu-* բնաձայնական արմատից), մու-նջ «խօսք» (բխեցվում է **munkio-*՝ **mun-* բնաձայնական արմատից)⁵⁸, որից՝ մնչել «մեղմիկ մոմռալ», ինչպես նաեւ անհայտ ծագման մու-ռտ «աղմուկ, շփոթ, խռովություն» (Գ. Զահուկյանն իրավացիորեն ենթադրում է, որ «...թերեւս կապված է մուռ, մումջ արմատների հետ»)⁵⁹, մ(ռ) ու-նջ «գազանի ահեղ ձայն»: Ինչպես տեսնում ենք, թե՛ բնիկ, թե՛ անհայտ ծագման համարվող հայերեն զուգահեռներում հստակորեն տարանջատվում է մու (ռապանուերեն *mu*) պարզական արմատը, ինչը ցույց է տալիս, որ ավելի ճիշտ կլինի այն նույնպես ստուգաբանել որպես կրկնավոր՝ *mu-mu* կազմություն (R-R):

Կամ, օրինակ, ռապանուերեն *tata*₃ «խփել» բառն ակնհայտորեն կազմված է ռապանուերեն *ta*₃ «խփել», «զոհաբերել» պարզ արմատից (տե՛ս նախապոլինեզերեն **ta*, ռապանուերեն *ta*, *tata*, թաիթերեն *ta*, *tata*, տոնգա *ta*, սամոա *ta*, մարկիզերեն *ta*, մաորի *ta*, մանգարեւա *ta*, տուամոտու *ta* «խփել»), բայց դիտվում է որպես մենարմատ (միաձեւույթ) *tata* կազմություն: Այնինչ վերջինիս բնիկ հայերեն տառացի զուգահեռը՝ «տալ» բայի երեք արմատական ձևերից (տու, տուր, տա) տա ձևը (որից ունենք ներկա՝ տամ, ապառնի՝ տաց եւ այլն, տես հայ. բրբ. տալ1 «ծեծել») դարձյալ հուշում է, որ այն կրկնավոր (*ta-ta*) բարդություն է՝ (R-R) բառաձև:

Բնիկ հայերեն տալ բայի տա արմատական ձեւով կազմված *tata*₃ «խփել» բայից բացի՝ պոլինեզիական լեզուներում ունենք նաեւ նույն բայի առաջին՝ տու արմատական ձեւով կազմված *tutu*₅ «խփել, ծեծել» բառ. նախաավտորոնեզերեն **tutu*, նախապոլինեզերեն **tutu*, տոնգա *tutu*, մար-

⁵⁷ Տե՛ս ՀԱԲ, էջ 359:

⁵⁸ Տե՛ս Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 539:

⁵⁹ Անդ, էջ 539–540:

կիզերեն tutu, թախթերեն tutu, հավայերեն kuku, մաորի tutu, մանգարեա tutu «խփել, ծեծել»: Վերջինիս տառացի զուգահեռը հայերեն մանկական լեզվի տուտու բառն է՝ «տալ, խփել, զարնել»⁶⁰ իմաստով, իսկ բարբառային ճշգրիտ համարժեքները Ղարաբաղի բարբառի հետեւյալ բառերն են. ծուծույ, որը գործածվում է կապակցությունների մեջ, ինչպես՝ ծուծույ անել «սիլլա անել, ապտակել» եւ ծուծուն, որից՝ ծուծուն անել «սաստիկ ծեծել», ծուծուն «մոշենու շոր ցողունը, որը ծեծելով օգտագործում են կրակը վառելու համար կամ որպես մոմ՝ նախապես պահելով ձեթի մեջ»⁶¹, (հմատ. նաեւ տոփել (տփել) «ծեծել, կոխտել» (հ.-ե. *doph-՝ *deph-)⁶², բրբ. (Ար., Մշ., Ուրմ.) տփտփել «ձեռքով մի քանի անգամ արագ-արագ հարվածել», (Ղրբ.) փոխաբ. «սաստիկ ծեծել»)⁶³: Այս ամենից հետեւում է, որ ռապանուերեն tutu, «խփել, ծեծել» բառը եւս ավելի ճիշտ կլինի դասել երկարմատ (երկձեւություն) կրկնավոր բառաձեւերի (R-R) շարքին:

Ռապանուերեն nene, «հաճելի, սիրելի, հաճելի տեսքով» բառը նույնպես համարվում է մենարմատ (R) բառ: Վերջինիս մենարմատ համարժեքը՝ բնիկ հայերեն մո-յն «վայելություն, բարեձեւություն» բառը (բխեցվում է *mou-no-, (*meu-) «խոնավ, թաց» (°)⁶⁴ արմատից) ցույց է տալիս, որ ռապանուերեն nene բառը նույնպես ավելի ճիշտ կլինի ստուգաբանել որպես երկարմատ ne-ne կազմություն կամ (R-R):

Ասվածը վերաբերում է նաեւ հետեւյալ ռապանուերեն բառերին, որոնց հայերեն զուգահեռները մենարմատ բառեր են. papa, «գրակիր տախտակ» — գրբ. փա-յտ «փայտ, ծառ» (*phæt-di- արմատից)⁶⁵, papa₂ «չորանալ արեւի տակ» — գրբ. պա-պա-կ «խիստ ծարավ», համարվում է կրկնավոր կազմություն անհայտ ծագման պակ արմատից (ռապանուերեն բառի երկար ձայնավորով նույնիմաստ տարբերակը՝ paapa (paa-pa) «չորանալ (արեւի տակ)», իրավամբ հատկացվում է բառաձեւի երկարմատ (R-R) տիպին): Այս դեպքում ռապանուերենի միջոցով ճշտվում են բառի պարզական արմատը կամ ձեւությունը, որ է պա, ոչ թե պակ. վերջինս հնագույն pa ձեւությի՝ բաղաձայնով աճած տարբերակն է:

⁶⁰ Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅԱՆ, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 438:

⁶¹ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013, էջ 320:

⁶² Գ. ԶԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 735:

⁶³ «Հայոց լեզվի բարբառային բառարան», Երեւան, 2010, էջ 258:

⁶⁴ Հարցականը մերն է:

⁶⁵ Գ. ԶԱՆՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 149:

Այսպիսով՝ ռապանուերենն *mumu* «լռակյաց», «համր», *nunu* «բարակ, նիհար», *tata*₃ «խփել», *tutu*₅ «խփել, ծեծել», *nene*₁ «հաճելի, սիրելի, հաճելի տեսքով», *papa*₁ «գրակիր տախտակ» եւ *papa*₂ «շորանալ արեւի տակ» բառերի՝ հայերեն մենարմատ զուգահեռների հետ համեմատությամբ ապացուցվում է, որ դրանք երկարմատ (երկձեւույթ) կրկնավոր բարդություններ են (R-R):

Ավելին՝ ռապանուերեն բառերի հայերեն զուգահեռների համեմատությամբ իրականացված ձեւույթների սահմանների ճշգրտման միջոցով մեզ հաջողվեց բացահայտել ռապանուերենում շտարբերակված նոր բառաձեւ:

Այսպես՝ ռապանուերեն *nenenene* (*nene-nene*) «ներքին օրգաններ, աղիներ» բառի գրաբարյան զուգահեռներն են. *նե-ր «մէջ, ներսը»* (բխեցվում է հ.-ե. **(e)nero-* «ներքին» ձեւից, թերեւս **ner-* «տակ» արմատից)⁶⁶, *ինչպես նաեւ զրբ. նե-ր նախադրություն՝ «մէջ, ներսում»* իմաստով (ներտեղուշ, ներ ի տան): Այս արմատի պարզագույն՝ այսինքն՝ *ր* ածականից զուրկ նախաձեւը պահպանել են հայերենի բարբառները, տես՝ (Ջղ.) *նե*, (Ղրբ.) *նի «ներս, մէջը»*, (Տփ.) *նի «ներս»* (հմմտ. *նաեւ անգլ. in «մէջ»*), *նաեւ գրաբարը, տես՝ նի «ներս»*⁶⁷:

Այսպիսով՝ ռապանուերեն բառի գրաբարյան զուգահեռները, որոնց մէջ կատարվել է *ր* ածականի հավելում, *ինչպես նաեւ հայերեն բարբառային երկպլանային տառացի համընկնումները ցույց են տալիս, որ ավելի ճիշտ կլինի այն ստուգաբանել որպես քառարմատ՝ ne-ne-ne-ne կազմություն (R-R-R-R): Այսպիսի բառաձեւ ռապանուերենում մինչ այժմ չի տարբերակվել:*

Ճիշտ նույն ձեւով՝ ռապանուերեն *pupapupa* «պղպջակ» բառը ստուգաբանվում է որպես երկարմատ կազմություն (*pupa-pupa*): Այնինչ այս կրկնավոր բարդության հայերեն զուգահեռը՝ գրաբարյան պղպուջ ձեւը (գրված նաեւ պաղպուջ, փղփուջ, բղբուջ) «պղպջակ» (<պուղ-պուջ-ակ), կրկնավոր կազմություն է (բնիկ հ.-ե. **bul-ից՝ *b(h)(e)u-* «փչել, ուռչել» արմատից)⁶⁸: Սա նշանակում է, որ բառի պարզ արմատն է՝ *pu*, որից ունենք ռապանուերեն կրկնավոր *pu-pa* բարդություն՝ հնչյունափոխված երկրորդ կրկնորդով (հմմտ. *նաեւ գրաբարյան փրփուր (<փուր-փուր) «փրփուր»*

⁶⁶ Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 565:

⁶⁷ Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 461:

⁶⁸ Պ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 640:

բառը (*pher-՝ *sper- «ցանեմ, սփռեմ» արմատից)⁶⁹: Ասվածից հետեւում է, որ ռապանուներեն pupa-pupa «պղպջակ» բառը եւս քառարմատ (R-R-R-R) բառ է:

Նույնպիսի վերլուծության արդյունքներից ելնելով՝ քառարմատ բարդություն պետք է համարել նաեւ ռապանուներեն pipipiri₂ (pipi-piri) «պեպեն» բառը: Վերջինիս գրաբարյան պեպլէն «պեպեն» զուգահեռն արդեն իսկ համարվում է «կրկնավոր կազմություն՝ անհայտ պլէն արմատից»⁷⁰: Մեր կարծիքի իրավացիության մի հավելյալ վկայություն ենք համարում այն փաստը, որ իմաստային նույն դաշտին պատկանող ռապանուներեն pipi₂ (pi-pi) «փոքր» բառը նույնպես համարվում է երկարմատ (pi-pi) բառ: Ռապանուներեն pipi₂ «փոքրիկ» բառի հայերեն զուգահեռներն են՝ բրբ. (Սր. Ղրբ. Շմխ.) պիծի «փոքր» (ռապան. pi-pi > հայ. բրբ. pi-çi, որտեղ երկրորդ կրկնորդում տեղի է ունեցել պ>ծ հնչյունափոխություն), բրբ. (Խտրջ.) պիծիկ, (Ղրբ.) շատ փոքր», (Մղր. Կր.) պիճի, (Մշ.) պիջի «փոքրիկ, պստիկ», (Ղրբ.) պած/պէծ/կած/կէծ «այրվող կամ շիկացած նյութի՝ կրակի փոքրագույն մասնիկ», «որեւէ բանի կայծկլտացող փոքր մասնիկ», տես նաեւ բրբ. (Ղրբ.) պուտի «կարճահասակ, թզուկ (անձ)»: Մեր կարծիքով՝ այս բոլոր բառերը նույնածագում են, եւ բոլորի մեջ ընդհանուր է «փոքր» իմաստը:

Համեմատական ստուգաբանության նույնպիսի արդյունքներից ելնելով՝ քառարմատ (R-R-R-R) բառաձեւեր պետք է համարել մատրի լեզվի poro-poro «փտած, փշացած», ռապանուներեն poroporo₁ (poro-poro) «վատթարանալ», «այլասերվել», poroporo₂ (poro-poro) «ունենալ քարանձավի, խոնավության հոտ», «տամկահոտ» բառերը, քանի որ վերջիններիս հայերեն մենարմատ զուգահեռը փոխ-տ «փտած բան, նեխություն» արմատն է (համարվում է փոխառություն մ. պ. pūt, պրս. pūd-ից)⁷¹:

Ամփոփելով՝ հանգում ենք հետեւյալ եզրակացությունների.

ա) անհերքելի է հնագույն հայերեն բառաշերտի առկայությունը պոլինեզիական լեզուներում, ի մասնավորի՝ ռապանուներենում: Լինելով աշխարհի չափազանց հնագույն եւ ամենամեկուսի գոյատեւած լեզուներից մեկը՝ այն իր մեկուսացվածության շնորհիվ անխաթար պահպանել է

⁶⁹ Անդ, էջ 771:

⁷⁰ Անդ, էջ 634:

⁷¹ ՀԱՔ, հտ. 4, էջ 526—527. Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 769:

հայերենի աներեւակայելի հնության ձեւույթներ եւ բառաձեւեր, որոնք կարող են սկզբնաղբյուրի դեր կատարել հայերենի համեմատական ուսումնասիրությունների ընթացքում,

բ) արդի հայերենի ամենահաճախական՝ երեք հնչյունից կազմված եւ մեկ բաղաձայնով վերջացող վանկերի մի ստվար խումբ ռապանուերենի նախափակ երկհնչույթ եւ նախափակ եռահնչույթ ձեւույթներին բաղաձայն տարրերի հավելման, ինչպես նաեւ ռապանուերենի լիակաղապար ձեւույթի օրինաչափ հնչահապավման արդյունք է, ինչն ապացուցում է Ա. Մեյերի՝ հին հայերենի վանկի կառուցվածքի մասին հայտնած կարծիքի ճշմարտացիությունը,

գ) ռապանուերեն բառերի հայերեն զուգահեռների համեմատական քննությունը նպաստում է ռապանուերենի ձեւույթի սահմանների որոշմանը եւ, դրանով հանդերձ, բառաձեւի կառուցվածքի ճշգրտմանը. օրինակ՝ ռապանուերեն որոշ մենարմատ (R) համարվող բառերի հայերեն զուգահեռների քննությունը ցույց է տալիս, որ դրանք իրականում երկարմատ (երկձեւույթ) կրկնավոր բարդություններ են եւ հատկացվում են բառաձեւի (R-R) տիպին,

դ) վերջին օրինակների մենարմատ հայերեն զուգահեռների գոյություն մը ցույց է տրվում, որ պոլինեզիական լեզուներում, մասնավորապես՝ ռապանուերենում, գոյություն ունի ցայսօր չտարբերակված քառարմատ (քառաձեւույթ)՝ R-R-R-R բառաձեւ եւս,

ե) պոլինեզիական լեզուների՝ հայերենի հետ կատարվելիք հետազա համեմատական ուսումնասիրությունները մեծապես կնպաստեն մի կողմից՝ պոլինեզիական լեզուների ուսումնասիրմանը եւ մյուս կողմից՝ հայերենի ծագման եւ զարգացման վաղնշագույն փուլերին հատուկ օրինաչափությունների վերհանմանը:

РЕЗЮМЕ

Описываются трудности определения структуры полинезийской словоформы из-за неопределенности разграничения таких терминов как морфема — слог — корень — слово.

Результаты многолетних исследований показывают, что легендарной родиной полинезийцев является Армянское нагорье, а факты полинезийских

языков, в частности рапануйского, имеют значимость первоисточника для армянского языка, так как подлинно отражают лингвистические реалии прото-армянского периода.

Выявлено, например, что наиболее часто встречающийся слог современного армянского языка, состоящий из трех звуков и заканчивающийся одним согласным (CVC), является результатом закономерного развития сохранившихся в рапануйском языке разнообразных древнейших (CV, CVV, CVCV) морфем.

Сопоставительно-этимологический анализ рапануйско-армянских общностей позволяет уточнить границы рапануйской морфемы. В итоге выясняется, что некоторые слова рапануйского языка, считающиеся однокоренными (R), в действительности являются двукоренными (двухморфемными) редубликациями и относятся к словоформе (R-R). В результате вышесказанного в рапануйском языке обнаруживается новая, доселе не дифференцированная четырехкоренная (четыреморфемная) словоформа (R-R-R-R).

Дальнейшие сопоставительные исследования полинезийских и армянского языков внесут большой вклад с одной стороны в изучение полинезийских языков, а с другой — выявление закономерностей, характерных для самых ранних периодов — происхождения и дальнейшего развития армянского языка.

SUMMARY

The article describes difficulties in determining the structure of the Polynesian word form due to the uncertainty in the definition of terms such as morpheme—syllable—root—word.

It is revealed that a large group of most common syllables of Modern Armenian, consisting of three sounds and ending with a consonant (CVC), is a result of the regular development of various Rapanui morphemes (CV, CVV, CVCV).

Conducting a comparative etymological analysis of Rapanui-Armenian commonalities allows to specify the boundaries of the Rapanui morpheme. As the findings demonstrate, some Rapanui words, which are considered mono-root (R), are in fact duo-root (two-morpheme) repetitive compound words and belong to the word-type (R-R). The final result also reveals a new quadro-root (four-morpheme) word

form in Rapanui, with the (R-R-R-R) structure, which has not been differentiated up until now.

Further comparative studies of Polynesian languages and the Armenian will greatly contribute, on the one hand, to the study of Polynesian languages and, on the other hand, to the discovery of patterns peculiar to the earliest stages of the origin and development of the Armenian.

